Մաս I «Համաշխարհային տնտեսության» համակարգը

Գլուխ 1 Համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ

1.1 «Համաշխարհային տնտեսության» հասկացությունը

Համաշխարհային տնտեսությունն ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում այս հասկացությունը, ինչու աշխարհի բոլոր երկրներն ունեն տնտեսական կապեր մեկը մյուսի հետ, ինչ բնույթ ունեն այդ կապերը և վերջապես ինչպես են այդ արտաքին տնտեսական կապերն ազդում ազգային տնտեսությունների վրա: Համաշխարհային տնտեսությունն իրենից ներկայացնում է ազգային տնտեսությունների ամբողջություն, որոնք միմյանց հետ փոխկապված են աշխատուժի միջազգային բաժանման համակարգով, տնտեսական և քաղաքական հարաբերություններով: Ազգային տնտեսությունների միջև կապն իրականացվում է միջազգային տնտեսական հարաբերություններով: Միջազգային տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առարկան պետությունների, տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների, վերազգային կորպորացիաների և միջազգային տնտեսական կազմակերպությունների միջև տնտեսական հարաբերություններն են:

Տնտեսական գրականության մեջ գոյություն չունի «Համաշխարհային տնտեսություն» հասկացության մեկ միասնական սահմանում, քանի որ այս տերմինն ունի շատ լայն կիրառում: Այդ պատճառով մասնագետներն առանձնացնում են համաշխարհային տնտեսության իրենց կարծիքով ամենակարևոր ասպեկտները: Ելնելով վերը նշվածից ներկայացնենք «Համաշխարհային տնտեսություն» հասկացության մի քանի մոտեցումներ:

Այսպես, համաշխարհային տնտեսության հասկացության լայն բացատրություն է տվել ֆրանսիացի տնտեսագետ Միշել Բոն, ով համաշխարհային տնտեսության հասկացության մեջ ընդգրկել է հետևյալ բաղկացուցիչները[1].

1. որպես արտադրական գործունեության ամբողջություն, որը կարելի է արտահայտել մակրոտնտեսական ցուցանիշներով, օրինակ՝ համաշխարհային

[1] А. И. *Погорлецкий* Экономика зарубежных стран. *Учебник.* Изд-во Михайлова В. А., *Санкт-Петербург* 2001. с 12

ՀՆԱ ամբողջական ծավալը (2016թ. տվյալներով համաշխարհային ՀՆԱ կազմել է 75.8 տրիլիոն ԱՄՆ դոլար)[2],

2. որպես աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցնում է իր տեղը և դերը համաշխարհային տնտեսության մեջ
3. որպես միջազգային տնտեսական հարաբերությունների ամբողջություն,
4. որպես վերազգային կազմակերպությունների և վերազգային բանկերի գլոբալ գործունեության արդյունք,
5. որպես երկրների տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումների և միջազգային կազմակերպությունների ամբողջություն
6. որպես համայն մարդկության տնտեսական գործունեության արդյունք՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վիճակը և ռեսուրսների հասանելությունը:

Մեկ այլ մոտեցման համաձայն համաշխարհային տնտեսությունը կարելի է սահմանել լայն և նեղ իմաստներով: Համաձայն լայն սահմանման համաշխարհային տնտեսությունը դա աշխարհի բոլոր ազգային տնտեսությունների հանրագումարն է, իսկ համաձայն նեղ սահմանման՝ ազգային տնտեսությունների այն ոլորտների հանրագումարն է, որոնք առնչվում են արտաքին աշխարհի հետ: Սակայն այս երկու սահմանումների միջև տարբերությունը գնալով փոքրանում է, քանի որ ցանկացած երկրում ավելի քիչ ոլորտներ կարելի է նշել, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով չեն առնչվում արտաքին աշխարհի հետ[3]:

Ընդհանրացնելով, եթե փորձենք համախմբել գրականության մեջ առկա մոտեցումները և ըմբռնումները, ապա դրանք կարելի է ներկայացնել հետևյալ երկու խմբով.

1. «Համաշխարհային տնտեսություն» հասկացության ամենատարածված մոտեցման համաձայն այն իրենից ներկայացնում է որպես ազգային տնտեսությունների ամբողջություն, որոնք միմյանց հետ փոխկապակցված են տնտեսական և քաղաքական հարաբերություններով: Այս սահմանման համաձայն որպես համաշխարհային տնտեսության տարրեր հանդես են

[2] Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, World Development Indicators 2017:
[3] А. С. *Булатова* *Экономика зарубежных стран. Учебник. Изд-во Юристъ.* Москва 2002, с 30

գալիս ազգային տնտեսություններն անկախ նրանից, թե դրանց կողմից արտադրված արտադրանքը նախատեսված է ներքին, արտաքին, թե միաժամանակ երկու շուկաների համար:

2. Համաձայն մյուս մոտեցման, համաշխարհային տնտեսությունը դիտարկվում է որպես միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգ: Այս մոտեցմանը կողմ են շատ արևմտյան մասնագետներ, մասնավորապես՝ կածելով, որ միջազգային տնտեսական հարաբերությունները ներառում է և՝ առևտուրը, և՝ ֆինանսական հարաբերությունները, ինչպես նաև կապիտալի և աշխատուժի ոչ հավասարաչափ բաշխումը: Ինչպես նկատում ենք, այս դեպքում տեսադաշտից դուրս է մնում արտադրությունը, որը որպես կանոն, հիմք է հանդիսանում միջազգային տնտեսական հարաբերությունների համար:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսությունն իրենից ներկայացնում է մի բարդ համակարգ, որը իրենից ներկայացնում է երկրների միջև ապրանքների, ծառայությունների և արտադրության գործոնների շարժ: Այս հիմքի վրա երկրների միջև առաջանում են միջազգային տնտեսական հարաբերությունների հետևյալ ձևերը՝ ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուր, կապիտալի միջազգային շարժ, աշխատուժի միջազգային միգրացիա, տեխնոլոգիաների միջազգային փոխանցում և միջազգային արժութա-ֆինանսական հարաբերություններ:

1.2 Համաշխարհային տնտեսության բնորոշ գծերը

Բոլոր մասնագետներն այն կարծիքին են, որ համաշխարհային տնտեսությունն իրենից ներկայացնում է մի որոշակի համակարգ: Այսպես.

- Համակարգի առաջացման և գոյատևման հիմք է հանդիսանում դրա ամբողջականությունը, որը ենթադրում է համակարգի բոլոր տարրերի միջև կայուն տնտեսական փոխազդեցություն: Միայն այս դեպքում է հնարավոր արտադրվող արտադրանքի կանոնավոր շրջանառությունը գլոբալ մակարդակում, որը միևնույն ժամանակ ապահովում է համակարգի ինքնակարգավորումը և զարգացումը: Համաշխարհային տնտեսության ամբողջականությունը ցույց տալու համար կարող ենք դիտարկել վերջին գլոբալ ֆինանսա-տնտեսական ճգնաժամը և դրա ազդեցությունը համաշխարհային

տնտեսության վրա: Այստեղ հարկ է նշել, որ գլոբալ ֆինանսա-տնտեսական ճգնաժամը (սկսվեց 2007թ. ԱՄՆ-ում և վերածվեց համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի) համաշխարհային տնտեսությունը հաղթահարեց արդեն 2010թ.: Այսպես, 2009թ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպը կազմեց - 1.7%, 2010թ.՝ 4.3%, 2011թ.՝ 3.2%, 2012թ.՝ 2.4%, 2013թ.՝ 2.6%, 2014թ.՝ 2.8%, 2015թ.՝ 2.8%, իսկ 2016թ.՝ 2.5%: 2011թ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպի նվազումը եվրոպական երկրների պարտքային ճգնաժամի արդյունք էր:

- Համաշխարհային տնտեսությունը դասվում է այն բարդ համակարգերի թվին, որոնք բնութագրվում են իրենց տարրերի բազմաթիվ բաղկացուցիչներով: Այդ բաղկացուցիչների թվին կարելի է դասել՝ հիերարխիկությունը, բազմամակարդականությունը, կառուցվածքայնությունը, տնտեսական զարգացման անհավասարաչափությունը և այլն:
    - Հիերարխիկ ասելով նկատի ունենք, որ համաշխարհային տնտեսության համակարգը առաջին հերթին կոչված է բավարարելու համակարգի «ամենաբարձր» տարրերի պահանջարկը: Տնտեսական ներուժն աշխարհում բաշխված է եղել և շարունակվում է բաշխվել ոչ հավասարաչափ: Այսպես, 2016թ. տվյալներով համաշխարհային ՀՆԱ-ն կազմել է 75.8 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ միայն ԱՄՆ-ին, Ճապոնիային, Գերմանիային, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 42.4% (2010թ. դրանց բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 44.1%)[4]: Այս ենթատեքստում տարածվող թեզիսը, համաձայն որի բաց տնտեսության պայմաններում յուրաքանչյուր երկիր հետևելով իր շահերին գործում է հօգուտ համաշխարհային համընդհանուր զարգացման, միայն քողարկում է մի շարք երկրների շահերի բավարարումը:
- Համակարգի հիմքը կազմում է միջազգային և առանձին ազգային տնտեսությունների նյութական և հոգևոր արժեքների արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը:
- Համակարգը չի ընկալվում միանշանակ:

[4] Այստեղ հարկ է նշել, որ վերը նշված երկրներին 2016թ. տվյալներով բաժին է ընկել համաշխարհային բնակչության մոտ 9.0%: Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, World Development Indicators 2017:

- Համաձայն մի մոտեցման համակարգը պետք է ունենա մեկ նպատակ, որը հանդիսանում է որպես համակարգի զարգացման «շարժիչ ուժ»: Այս համակարգի ներսում կարող են գոյություն ունենալ առանձին ենթահամակարգեր, որոնց բնորոշ է առանձնահատուկ բնութագրիչներ, սակայն որոնք, այնուամենայնիվ, ենթարկվում են համակարգի գլխավոր նպատակին:
- Համաձայն մյուս մոտեցման, համակարգը բաղկացած է ենթահամակարգերից, որոնք ունեն տարբեր և նույնիսկ մեկը մյուսին հակասող նպատակներ: Սակայն համակարգի մեջ մտնող ենթահամակարգերը պետք է կապված լինեն մեկը մյուսի հետ: Համակարգի նման կառուցվածքը կարող է ունենալ ժամանակավոր, անցումային բնույթ, քանի որ առավել առողջ ենթահամակարգերը ձևափոխում կամ իրենց նպատակին են ենթարկում մյուսներին: Հակառակ դեպքում համակարգը կործանվում է:

1.3 Համաշխարհային տնտեսության սուբյեկտները

Համաշխարհային տնտեսության մեջ նպատակաուղղված տնտեսական գործունեությունն իրականացվում է սուբյեկտների կողմից, որոնք որոշում են արտադրության գործոնների վիճակը և զարգացումը:

Համաշխարհային տնտեսության սուբյեկտներ են համարվում այն տնտեսվարող միավորները, որոնք տիրապետում են անհրաժեշտ կապիտալի, ընդունակ են կազմակերպել արտադրական գործընթաց միջազգային մակարդակում և տիրապետում են որոշակի միջազգային իրավունքներ և պարտականություններ:

Այդպիսի տնտեսվարող սուբյեկտների թվին են դասվում պետությունները, վերազգային կորպորացիաները, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումները և միջազգային տնտեսական կազմակերպությունները:

Պետությունը որպես համաշխարհային տնտեսության հիմնական սուբյեկտ: Պետությունն իրենից ներկայացնում է հասարակության կազմակերպման քաղաքական և տնտեսական ձև: Պետության զարգացումը սերտորեն կապված է ազգային տնտեսության հետ: Պետության դերը տնտեսության մեջ առաջին հերթին դրսևորվում է ձեռնարկությունների համար երկրի ներսում և արտասահմանում շուկաների

ստեղծմամբ, կապիտալի կուտակման գործընթացում նրա մասնակցությամբ, ելնելով ազգային շահերից ներքին և արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորմամբ, ՀՆԱ-ում նրա մասնակցությամբ և այլն: Սովորաբար պետությունը պատասխանատվություն է կրում իր բնակչության սոցիալական ապահովվածության համար: Այսպես, զարգացած երկրներում բնակչության սոցիալական ծառայություններին ուղղված պետության ծախսերը կազմում են ՀՆԱ-ի միջինում 20%, իսկ զարգացող երկրներում՝ 5%[5]:

Պետությունը համարվում է տնտեսական գործունեության ակտիվ մասնակից: Ձեռք բերելով ապրանքներ և ծառայություններ այն ստեղծում է պահանջարկ, կատարում է ներդրումներ, տրամադրում է սուբսիդիաներ: Պետությունը հանդես է գալիս նաև որպես խոշոր գործատու: Սա իրականում կապված է երկրի սոցիալ տնտեսական զարգացման մոդելից, սակայն եթե փորձենք ամփոփել, ապա պետությունը միջինում ապահովում է զբաղվածների ավելի քան 20%[6]:

Այսպիսով՝ պետությունն օգտագործելով իր «իշխանական մենաշնորհը» որոշում է ազգային տնտեսության զարգացման ռազմավարությունը, մշակում է հասարակության զարգացման իրավական հիմքերը, կարգավորում է դրամավարկային հարաբերությունները, ինչպես նաև համակարգում է ենթակառուցվածքների ու սոցիալական ոլորտների զարգացումը:

Վերազգային կորպորացիաներ: Վերազգային կորպորացիաները հատուկ տեղ են գրավում համաշխարհային տնտեսության մեջ՝ բազմակողմանի ազդեցություն ունենալով վերջինիս գործունեության վրա:

Գրականության մեջ մենք կարող ենք հանդիպել վերազգային կորպորացիաների մի քանի սահմանումների: Այսպես, վերազգային կորպորացիաներ են համարվում այն ընկերությունները, որոնք իրենց գործունեությունը ծավալել են երկու և ավելի երկրներում: Մեկ այլ սահմանման համաձայն վերազգային կորպորացիաներ են համարվում այն ընկերությունները, որոնց գլխավոր գրասենյակը գտնվում է մեկ

[5] 2016թ. ՀՀ-ում սոցիալական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 7.2%, իսկ բյուջեի ընդհանուր ծախսերի 29.4%, որից 72.5% բաժին է ընկել միայն ծերության նպաստներին: Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, http://minfin.am/hy/page/petakan_byuje_2016_t (ինտերնետային կայքն այցելվել է 27.12.2017թ.):

[6] Աղբյուր՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, (Organization for Economic Cooperation and Development, OECD) http://www.oecd-ilibrary.org/sites/gov_glance-2011-en/05/01/index.html?itemId=/content/chapter/gov_glance-2011-27-en (ինտերնետային կայքն այցելվել է 30.01.2016թ.)

որոշակի երկրում, իսկ ձեռնարկությունն իր գործառնություններն իրականացնում է ամբողջությամբ կամ մասնակիորեն իրեն պատկանող դուստր ձեռնարկությունների միջոցով, որոնք տեղակայված են մեկից ավել երկրներում: Կապիտալի ազգային բաղադրիչով վերազգային կորպորացիաները բաժանվում են երկու խմբի.

1. առաջատար տեղ են գրավում այն վերազգային կորպորացիաները, որոնք ըստ կապիտալի ազգային են, իսկ ըստ գտնվելու վայրի՝ միջազգային:
2. ըստ կապիտալի միջազգային ընկերություններն այնքան էլ շատ չեն և գտնվում են երկրորդ տեղում:

Վերազգային կորպորացիաները սկսեցին հիմնականում զարգանալ 1960-ական թթ., երբ արևմտյան երկրների առաջատար ընկերությունները սկսեցին կապիտալի մասսայական արտահանումը[7]: Աշխատանքի միջազգային բաժանման խորացումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն ստեղծեցին առանձին տեխնոլոգիական գործընթացների տարածական բաժանման համար:

Գրեթե բոլոր խոշոր վերազգային կորպորացիաները կենտրոնացած են հիմնականում ԱՄՆ-ում, Ճապոնիայում և ԵՄ-ում: 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին մի շարք զարգացող երկրներում (հատկապես Չինաստան և Ռուսաստան) ձևավորվեցին խոշոր վերազգային կորպորացիաներ: Ի տարբերություն զարգացած երկրների վերազգային կորխորացիանների, այս վերազգային կորպորացիաների, գործունեության ոլորտը հիմնականում արդյունահանող արդյունաբերությունն է (հատկապես էներգակիրների ոլորտ): Խոշոր վերազգային կորպորացիաների տարեկան շրջանառության ծավալը կարող է գերազանցել մի շարք զարգացող և «փոքր» զարգացած երկրների ՀՆԱ-ն:

Վերազգային կորպորացիաների գործունեության միջազգային ուղղվածությունը և դրանց ձգտումը ստանալ առավելագույն շահույթ հաճախ հակասության մեջ է մտնում ընդունող երկրի շահերի հետ: Վերազգային կորպորացիաները փորձում են դիտարկել օտարերկրյա պետություններին, որպես սովորական տնտեսվարող սուբյեկտներ:

Վերազգային կորպորոցիաների գործունեությունը կարգավորելու փորձեր արվել է դեռ 1970-ական թվականներին: ՄԱԿ-ի շրջանակներում բանակցություններ էին

[7] Վերազգային կորպորացիաների առաջացման ժամանակաշրջանի վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Մասնագետների մի մասը գանում է, որ վերազգային կորպորացիաներն առաջացել են դեռ 16-րդ դարում, իսկ մյուս մասը՝ 18-19-րդ. դարերում:

ընթանում, որպեսզի ձեռք բերվի բազմակողմանի համաձայնագիր վերազգային կորպորացիաների գործունեությունը կարգավորելու համար: Այս փորձերը լուրջ դիմադրություններ ունեցան առաջատար արևմտյան երկրների կողմից: Արդյունքում 1974թ. ՄԱԿ-ի գլխավոր մարմիններից մեկում՝ Տնտեսական և սոցիալական խորհրդում (ՏՍԽ), հիմնադրվեց Վերազգային կորպորացիաների հանձնաժողովը, որի հիմնական նպատակն է օժանդակել ՏՍԽ-ին վերազգային կորպորացիաների գործունեության կարգավորման գործում[8]:

Տարածարջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներ: Համաշխարհային տնտեսության մասնակիցներ են համարվում նաև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումները: Ներկայումս հաշվում են ավելի քան քսան այդպիսի խմբավորումներ և դրանք աճի միտում ունեն: Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներն իրենցից ներկայացնում են միջպետական տնտեսական համագործակցություն, որի հիմնական նպատակն է աստիճանաբար միավորել մասնակից երկրների տնտեսությունները՝ առաջին հերթին մերձեցնելով դրանց տնտեսական մեխանիզմներն արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում:

Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները ներառում են աշխարհագրորեն մոտ երկրներ, որոնք ունեն գրեթե նույն տնտեսական զարգացման մակարդակը (Օրինակ՝ Եվրոպական Միություն (European Union, EU) և Հյուսիս Ամերիկյան Ազատ Առևտրի Համաձայնագիր (North American Free Trade Agreement, NAFTA):

Միջազգային տնտեսական կազմակերպություններ: Միջազգային տնտեսական կազմակերպությունները համարվում են համաշխարհային տնտեսության կարևոր սուբյեկտներից: Միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում առավել մեծ նշանակություն ունեն Արժույթի միջազգային հիմնադրամը (International Monetary Fund, IMF)[9], Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (World Trade Organization, WTO)[10] և Համաշխարհային բանկի խումբը (World Bank,

[8] ՄԱԿ-ի գլխավոր մարմիններն են՝ Գլխավոր Ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և Սոցիալական Խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը:
[9] www.imf.org - Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայք:
[10] www.wto.org - Առևտրի համաշխարհային կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայք:

WB)[11], մասնավորապես՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (International Bank for reconstruction and Development, IBRD)[12]:

Արժույթի միջազգային հիմնադրամը ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը ստեղծվել են 1944թ.: Արժույթի միջազգային հիմնադրամի հիմնական նպատակն է արժութային համակարգում միջազգային համագործակցության կազմակերպումը և միջազգային առևտրի խթանումը[13]: Արժույթի միջազգային հիմնադրամի անդամակցությունը համարվում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի անդամակցության նախապայման: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հիմնական նպատակն է մասնակից երկրներին վերակառուցման և զարգացման համար աջակցության տրամադրումը[14]:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը սկսել է գործել 1995թ. հունվարի 1-ից, որպես 1986-1993թթ. GATT[15]-ի բանակցությունների արդյունք, որը հայտնի է որպես «Ուրուգվայի ռաունդ»: Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնական նպատակն է խթանել միջազգային առևտուրը մասնակից երկրների միջև[16]:

1.4 Համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի առանձնացման չափանիշները

Համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական, ամբողջական համակարգ կազմված է ենթահամակարգերից, տարածաշրջաններից և խմբերից, որոնք ունեն որոշակի ընդհանրություններ և տարբերություններ: Իրենց զարգացման ընթացքում ենթահամակարգերը հետևում են ոչ միայն գլոբալ համակարգի ընդհանուր նպատակներին, այլև լուծում են իրենց սեփական նպատակները:

Գոյություն ունեն մի շարք մեթոդներ, ըստ որի երկրները բաժանվում են խմբերի: Առաջին հերթին կարելի է դիտարկել տարածաշրջանային մոտեցումը, որի հիմքում

[11] www.worldbank.org - Համաշխարհային բանկի խմբի պաշտոնական ինտերնետային կայք:
[12] Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնում են՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, Զարգացման միջազգային ասոցացիան, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Ներդրումային երաշխիքների բազմակողմանի գործակալությունը և Ներդրումային վեճերի միջազգային կենտրոնը:
[13] 1992թ. բացի Տաջիկստանից ԱՄՀ անդամակցեցին բոլոր նախկին Խորհրդային Միության երկրները: Հայաստանը կազմակերպությանն անդամակցել է 1992թ. մայիսի 28-ին:
[14] Հայաստանը կազմակերպությանն անդամկցել է 1992թ. դեկտեմբերի 7-ին:
[15] Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագիրը (General Agreements on Tariffs and Trade, GATT) բազմակողմանի համաձայնագիր է, որը պարունակում է սկզբունքներ, իրավական նորմեր և կանոններ, որոնցով առաջնորդվում են մասնակից երկրները միմյանց հետ առևտրում: Համաձայնագիրը ստորագրվել է Ժնևում 1947թ. հոկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 1948թ. հունվարի 1-ին:
[16] 2003 թ. փետրվարի 5-ից ՀՀ-ն համարվում է ԱՀԿ լիիրավ անդամ:

ընկած է աշխարհի բաժանումը ըստ պատմամշակութային տարածքների: Պատմամշակութային տարածքները դրանք այն տարածքներն են, որոնք պատմական, քաղաքական, մշակութային և տնտեսական հարաբերություններում ունեն որոշակի ընդհանրություններ: Համաձայն այսպիսի մոտեցման, օրինակ՝ Եվրոպան, բաժանվում է Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Ասիան՝ Մերձավոր Արևելքի, Միջին Արևելքի, Հարավ Արևելյան Ասիայի և այլն, իսկ Աֆրիկան՝ Հյուսիսային, Կենտրոնական և Սահարա անապատից հարավ ընկած (Հարավային Աֆրիկա) Աֆրիկայի:

Երկրների դասակարգման երկրորդ հաճախ օգտագործվող մոտեցումը դա տիպոլոգիական տարբերակումն է: Տիպոլոգիական տարբերակման չափանիշներն են.

1. երկրի աշխարհագրական դիրքը,
2. տվյալ պետության առաջացման ժամանակաշրջանը,
3. բնակչության էթնիկական և կրոնական կազմը,
4. բնակչության թվաքանակը,
5. պետական լեզուն և զարգացման մշակութային առանձնահատկությունները:

Ժամանակին մարքսյան քաղաքատնտեսությունը նույնպես մասնակիորեն բաժանում էր երկրները տիպոլոգիական մոտեցման հիման վրա, որի հիմքում ընկած էր հասարակության արտադրական հնարավորությունները: Ըստ այս մոտեցման, երկրները բաժանվում էին կապիտալիստական և սոցիալիստական, ինչպես նաև երրորդ աշխարհի երկրների՝ համապատասխանաբար սոցիալիստական կամ կապիտալիստական ուղղվածությամբ:

Մյուս կողմից տնտեսական վերլուծության համար համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի առանձնացման համար օգտագործվում են հետևյալ չափանիշները

- տնտեսության սոցիալական կառուցվածքի բնութագիրը
- տնտեսության տնտեսական զարգացման մակարդակը
- տնտեսության տնտեսականի աճի ձևը (էքստենսիվ, ինտենսիվ)
- արտաքին տնտեսական հարաբերությունների մակարդակը և բնութագիրը:

Այսպես, համաձայն ՄԱԿ-ի մեթոդիկայի, ցանկացած երկրի կարևոր սոցիալ-տնտեսական ցուցանիշներն են.

1. ՀՆԱ/ՀԱԱ-ը, ինչպես նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ/ՀԱԱ-ը,

2. վերամշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի բաժինը ՀՆԱ/ՀԱԱ-ում,
3. կյանքի միջին տևողությունը և բնակչության կրթվածության աստիճանը:

Այստեղ հարկ է նշել, որ բնակչության կյանքի միջին տևողության ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Կյանքի միջին տևողության ինդեքս} = \frac{\text{սպասվող կյանքի միջին տևողություն} - \text{կյանքի նվազագույն տևողություն աշխարհում}}{\text{կյանքի առավելագույն տևողություն աշխարհում} - \text{կյանքի նվազագույն տևողություն աշխարհում}}$$

Ժամանակակից պայմաններում նույնիսկ առավել ոչ բարենպաստ երկրներում կյանքի նվազագույն տևողությունը չի իջնում 25տ., իսկ առավել բարենպաստ երկրներում այն չի գերազանցում միջինում 85տ.:

Բնակչության կրթվածության աստիճանը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Բնակչության կրթվածության ինդեքս} = \frac{\text{գրագետների բաժինը. 2 x 15տ բարձր տարիք ունեցողների մեջ} + \text{դպրոցական և ուսանողական տարիքում բնակչության ներգրավվածությունը կրթության մեջ}}{3}$$

Հիմնվելով սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա՝ տնտեսական վերլուծության համար ՄԱԿ-ը երկրներին բաժանում է.

1. զարգացած երկրներ,
2. անցումային երկրներ,
3. զարգացող երկրներ:

Համաշխարհային բանկի կողմից գործառնական և վերլուծական նպատակով երկրների դասակարգման հիմնական չափանիշը համարվում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ: Այս չափանիշով երկրները բաժանվում են.

1. ցածր եկամտի մակարդակով երկրներ (մինչև 1,035 դոլար),

2. միջին եկամտի մակարդակով երկրներ, (ենթախմբեր՝ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ (1,036 մինչև 4,085 դոլար) և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (4,086 մինչև 12,615 դոլար)),
3. բարձր եկամտի մակարդակով երկրներ (12,616 դոլարից բարձր)[17]:

Ցածր և միջին եկամտի մակարդակով երկրները երբեմն վերագրվում են զարգացող երկրների շարքին: Հարկ է նշել, որ երկրների դասակարգումը եկամտի մակարդակով ոչ միշտ է արտացոլում երկրի տնտեսական զարգացման կարգավիճակը (բնակչության թիվը զարգացած երկրներում փոքր է, իսկ զարգացող երկրներում՝ մեծ): «Զարգացող երկրներ» տերմինը Համաշխարհային բանկի կողմից օգտագործվում է, որպեսզի արտացոլի ցածր և միջին եկամտի մակարդակ ունեցող երկրների տնտեսական զարգացման կարգավիճակը: Այսինքն, այս տերմինի օգտագործումն ամենևին էլ չի ենթադրում, որ խմբի բոլոր երկրներն իրականում հանդիսանում են զարգացող կամ արդեն հասել են իրենց զարգացման վերջնական փուլին:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա համաձայն Համաշխարհային բանկի նոր դասակարգման Հայաստանը ներկայումս համարվում է զարգացող, միջինից ցածր եկամտի մակարդակ ունեցող երկիր: 2016թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող անվանական ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է 3,606 դոլար[18]: Այստեղ հարկ է նշել, որ մինչև 2003թ., ըստ Համաշխարհային բանկի նախկին դասակարգման, Հայաստանը համարվել է զարգացող, ցածր եկամտի մակարդակ ունեցող երկիր, քանի որ անկախացումից հետո մինչև 2003թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանում չի գերազանցել 785 դոլարը[19]: Այնուհետև 2003-2007թթ. ընկած ժամանակաշրջանում, ըստ նույն դասակարգման, Հայաստանը համարվել է զարգացող, միջինից ցածր

[17] Այդ դասակարգումը գործում է 2013թ.-ից իսկ մինչև 2013թ. երկրները ըստ եկամտի մակարդակի մեծության դասակարգվում էին հետևյալ կերպ՝ ցածր եկամտի մակարդակով երկրներ (մինչև 785 դոլար), միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ (786 մինչև 3,125 դոլար), միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (3,126 մինչև 9,655 դոլար) և բարձր եկամտի մակարդակով երկրներ (9,656 դոլարից բարձր):

[18] 2016թ. տվյալներով Հայաստանի անվանական ՀՆԱ-ն կազմել է 10.5 մլրդ. դոլար, իսկ իրական ՀՆԱ-ն (2010թ. գներով արտահայտված)՝ 11.5 մլրդ. դոլար: Մյուս կողմից Հայաստանի ՀՆԱ-ն հաշվարկված ըստ գնողունակության պարիտետի (PPP) 2016թ. կազմել է 25.7 մլրդ. դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 8,817 դոլար:

[19] 2002թ. մեկ շնչին բաժին ընկնող անվանական ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է 780 դոլար:

եկամտի մակարդակ ունեցող երկիր, իսկ 2007-2016թթ. ընկած ժամանակաշրջանում՝ միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկիր:

Համաձայն Համաշխարհային բանկի դասակարգման, ըստ երկրի արտաքին պետական պարտքի մեծության, երկրները բաժանվում են բարձր, միջին և ցածր արտաքին պետական պարտքի մակարդակով երկրների: Բարձր արտաքին պետական պարտքի մակարդակը նշանակում է, որ երկիրը գերազանցել է հետևյալ կրիտիկական ցուցանիշները.

1. արտաքին պետական պարտքի սպասարկման ընթացիկ արժեքի հարաբերությունը ՀՆԱ-ին գերազանցում է 80%-ը:
2. արտաքին պետական պարտքի սպասարկման ընթացիկ արժեքի հարաբերությունը արտահանմանը գերազանցում է 220%-ը:

Միջին արտաքին պետական պարտքի մակարդակը բնորոշ է այն երկրներին, որոնց մոտ մեկ կամ երկու ցուցանիշներն էլ գերազանցում են 60%-ը, սակայն չեն հասնում կրիտիկական մակարդակին:

Ըստ արտաքին պետական պարտքի մեծության Հայաստանը համարվում է ցածր արտաքին պետական պարտքի մակարդակ ունեցող երկիր: Այսպես, 2016թ. տվյալներով ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 4.3 մլրդ. դոլար կամ ՀՆԱ-ի 40.9%[20]: Համեմատության համար նշենք, որ 2000թ. տվյալներով ՀՀ արտաքին պետական պարտքի մեծության հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 34.1%: Այստեղ հարկ է նշել, որ չնայած 2000-2008թթ. ընկած ժամանակաշրջանում արտաքին պետական պարտքը բացարձակ մեծությամբ գրեթե անընդհատ աճել է (651 մլն. դոլարից հասնելով 1.4 մլրդ. դոլար), սակայն դրա հարաբերակցությունը ՀՆԱ-ին անընդհատ նվազել է՝ 2008թ. կազմելով ՀՆԱ-ի 12.0%: 2008թ. սկսած արտաքին պարտքի զգալի ավելացումը հիմնականում պայմանավորված էր գլոբալ ֆինանսա-տնտեսական ճգնաժամով իսկ 2014թ. սկսած Ռուսաստանի դեմ կիրարվող պատժամիջոցներով, ինչը զգալի բացասական ազդեցություն ունեցավ նաև ՀՀ տնտեսության վրա:

[20] ՀՀ պեաական պարաքը 2016թ. կազմել է 5.9 մլրդ. դոլար, որից 5.4 մլրդ. դոլարը կազմել է կառավարության պարաքը (իր հերթին 5.4 մլրդ. դոլարից 4.3 մլրդ. դոլարը կազմել է արաաքին պարաքը, 1.1 մլրդ. դոլարը՝ ներքին պարաքը) իսկ 0.5 մլրդ. դոլարը կազմել է ՀՀ կենարոնական բանկի արաաքին պարաքը:

Բացի ենթահամակարգերից ՀՏ ունի նաև կարգավորող որոշակի էլեմենտներ: Միջազգային տնտեսական համակարգը կարգավորվում է միջազգային իրավունքով: Այսինքն, իրավական նորմերի ամբողջությամբ, որոնք համատեղ ստեղծվում են տարբեր պետությունների կողմից, որպեսզի կարգավորեն միմյանց միջև փոխադարձ հարաբերությունները: Միջազգային իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրավական ոլորտներում, որտեղ տվյալ երկիրն ունի միջազգային համաձայնագրեր միջազգային նորմերին տրվում է առաջնայնություն: Մասնավորապես, 1969թ. Վիեննայի կոնվենցիայի համաձայն կողմը (երկիրը) չի կարող հիմնվել իր ներքին իրավունքի վրա, որպեսզի հիմնավորի միջազգային համաձայնագրի չկատարումը:

ՀՏ կարգավորման գործընթացին կարելի է դասել նաև այն միջազգային կազմակերպություններին, որոնց նպատակն է տարբեր բնագավառներում կոորդինացնել պետությունների փոխհարաբերությունները: Այստեղ առաջնային դեր է խաղում ՄԱԿ-ը:

Գլուխ 2 Համաշխարհային տնտեսության ձևավորումը և զարգացումը

2.1Համաշխարհային տնտեսության ձևավորումը

19-րդ դարի երկրորդ կեսին արտադրական ուժերի և ազգային տնտեսությունների զարգացումը էական փոփոխություններ առաջ բերեց վերջիններիս փոխհարաբերություններում: Համաշխարհային տնտեսության համակարգի ձևավորման համար որպես հիմք է հանդիսացել համաշխարհային/միջազգային շուկան[21] և միջազգային արտադրությունը: Այդ ժամանակաշրջանում միջազգային արտադրության զարգացումը պայմանավորված էր գաղութատիրական համակարգի ընդլայնմամբ: Այսինքն՝ գաղութատիրական համակարգը համարվել է այն պայմաններից մեկը, որը խթանել է աշխարհի տնտեսական միավորմանը բռնությամբ: Այսպիսով, համաշխարհային տնտեսությունը կազմավորվեց 20-րդ դարի սկզբին: Համաշխարհային շուկայի առաջացմանը խթանեց արտադրության կապիտալիստական ձևը: 19-րդ դարի երկրորդ կեսին խոշոր արդյունաբերության առաջացումը և զարգացումը բացահայտեց ներքին շուկայի

[21] Համաշխարհային շուկայի ձևավորման սկիզբ/պատճառ է համարվում «արդյունաբերական հեղաշրջումը»

«սահմանափակվածությունը»: Արտադրված ապրանքներն իրացնելու համար անհրաժեշտ դարձավ դուրս գալ արտաքին շուկաներ: Հենց այս ժամանակաշրջանում սկսվում է կապիտալի արտահանման և օտարերկրյա ներդրումների գործընթացը:

Գաղութատիրական համակարգ: Գաղութատիրական համակարգը վիթխարի չափերի հասավ 19-րդ դարի երկրորդ կեսին: Խոշոր գաղութատիրական համակարգ ունեցողների թվին (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Նիդերլանդներ) ավելացան նաև Գերմանիան, ԱՄՆ, Բելգիան և Ճապոնիան: Արդյունքում գրեթե ամբողջ աշխարհը տարածաշրջանային և քաղաքական առումով բաժանված էր մի շարք երկրների միջև: Գաղութների հետ քաղաքական և իրավական հարաբերությունները տարբեր էին՝ մասնակի քաղաքական կախվածությունից մինչև լրիվ քաղաքական կախվածություն:

16-18-րդ դարերը ընկած ժամանակաշրջանում՝ մինչև «արդյունաբերական հեղաշրջումը», գաղութատիրական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր տեղական հարստության թալանմանը, իսկ գաղութների հետ առևտուրը կրում էր պարզ, սպառողական բնույթ: Սակայն «արդյունաբերական հեղաշրջումից» հետո գաղութատիրական համակարգը վերածվեց գաղութատերերի կողմից արտադրված ապրանքների իրացման շուկայի: Օրինակ 19-րդ դարի կեսին Մեծ Բրիտանիայից արտահանվող գործվածքների 25% բաժին էր ընկնում Հնդկաստանին: Արևմտյան երկրների արդյունաբերական ապրանքները, որոնք բավականին էժան էին, քան գաղութատիրական համակարգում արտադրված նմանատիպ ապրանքները, քայքայեցին գաղութատիրական համակարգի տեղական արտադրությունը: Այսպես, Հնդկաստանը, որը նախկինում համարվում էր բամբակյա գործվածքների և ապակե ու մետաղյա իրերի արտահանող երկիր, վերածվեց այդ ապրանքների զուտ ներմուծողի:

Կապիտալի արտահանում: 19-րդ դարի կեսերին մեծ ծավալներով սկսեց կապիտալի արտահոսքը Եվրոպական երկրներից: Ամբողջ արտահանվող կապիտալի մոտ կեսը բաժին էր ընկնում Հյուսիսային Ամերիկային, իսկ մնացած մասը Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրներին: Արտահանվող կապիտալի հիմնական մասը կազմում էին փոխառությունները, որոնք ուղղվում էին ենթակառուցվածքների զարգացմանը (առաջին հերթին երկաթգծերի): Այդ ժամանակաշրջանի կապիտալի շուկայի հիմնական առանձնահատկությունը կայանում էր պետական փոխառությունների գերակշռման մեջ: Մյուս առանձնահատկությունը կայանում էր

նրանում, որ սկսեց զարգանալ ձեռնարկատիրական կապիտալի միջազգային շարժը: Այդ ժամանակաշրջանում (20-րդ դարի սկիզբ) օտարերկրյա ներդրումներում գերակշռում էին պորտֆելային/անուղղակի ներդրումները, իսկ ուղղակի ներդրումներին բաժին էր ընկնում արտասահմանյան ներդրումների 33%: Հետագայում հենց ձեռնարկատիրական կապիտալի արտահանումն էլ հիմք հանդիսացավ միջազգային արտադրության զարգացման համար:

Միջազգային առևտրի զարգացում: Ձեռնարկչատիրական կապիտալի արտահանման ընդլայնումը իր հերթին հիմք հանդիսացավ միջազգային առևտրի զարգացման համար: 1870-1913թթ. ընկած ժամանակաշրջանում համաշխարհային արտահանման ծավալը աճեց գրեթե չորս անգամ: Այստեղ հարկ է նշել, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի վերջին արտահանման հիմնական շուկաները դրանք զարգացած երկրներն էին (65%), «զարգացող» երկրներին բաժին էր ընկնում ամբողջ արտահանման 20%, իսկ գաղութատիրական համակարգին 15%:

Արդյունքում, ամփոփելով կարող են նշել, որ 19-րդ դարի վերջին ձևավորվեց համաշխարհային տնտեսությունը: Ձևավորված համաշխարհային տնտեսության համակարգը կառուցված էր մի շարք զարգացած կապիտալիստական երկրներից և վիթխարի քանակությամբ ագրարա-հումքային կախյալ երկրներից:

2.2 Համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը

Մասնագետներն առանձնացնում են համաշխարհային տնտեսության զարգացման չորս փուլեր: Այսպես, առաջին փուլը սկիզբ է առել մինչև արտադրության ինդուստրիալ ժամանակաշրջանը: Սկզբնական շրջանում որպես համաշխարհային տնտեսության առաջին օբյեկտներ հանդիսանում էին ավելցուկային հացահատիկային կուլտուրաները, մսամթերքը և այլ բարիքները, որոնք գոյանում էին տարբեր համայնքների/ցեղերի մոտ: Ժամանակի ընթացքում՝ ապրանքային արտադրության զարգացմամբ, դրանք սկսեցին փոխանակվել տարբեր պետությունների միջև, իսկ առևտրականների առաջացմամբ սկսեց զարգանալ միջազգային առևտուրը:

Երկրորդ փուլը սկիզբ առավ արտադրության ինդուստրիալ ժամանակաշրջանում: Խոշոր մեքենայական արտադրության և ձեռնարկատերերի կողմից շահույթի անընդհատ ավելացման ձգտման արդյունքում արտաքին առևտուրը

դարձավ ցանկացած ազգային տնտեսության կարևոր բաղկացուցիչ: Որպես հետևանք 18-19-րդ դարերում առաջացավ համաշխարհային շուկան:

Համաշխարհային տնտեսության զարգացման երրորդ փուլը սկիզբ առավ 19-20-րդ դարերում, երբ ձևավորվեց համաշխարհային տնտեսությունը, որպես մեկ միասնական համակարգ, որին բնորոշ էին մի շարք առանձնահատկություններ (Տես Նկար 1.1):

Նկար 1.1 Համաշխարհային տնտեսության առանձնահատկությունները 20-րդ դարի սկզբին



Արևմտյան երկրներում բաժնետիրական կապիտալի զարգացումը և ավելի բարձր շահույթ ստանալու ձգտումը բերեց նրան, որ կապիտալը սկսեց մեծ ծավալներով տեղափոխվել այլ երկրներ: Կապիտալի արտահոսքի և միջազգային առևտրի ծավալների ավելացման արդյունքում առաջացան միջազգային մոնոպոլիաներ: Վերջիններս միմյանց միջև բաժանեցին իրացման միջազգային շուկաները, հանքահումքային աղբյուրները և կապիտալի ներդրման ոլորտները: Առաջատար երկրների ֆինանսական կապիտալը ձգտում էր քաղաքական/վարչական վերահսկում հաստատել իր գործունեությունը ծավալած երկրներում: Արդյունքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին զգալի ընդլայնվեց գաղութատիրական համակարգը:

Եվ վերջապես համաշխարհային տնտեսության զարգացման չորրորդ փուլը սկիզբ առավ 20-րդ դարում: Սակայն 20-րդ դարի սկզբին ձևավորված համաշխարհային տնտեսական համակարգն իր մեջ պարունակում էր սոցիալ-տնտեսական հակասություններ:

20-րդ դարում համաշխարհային տնտեսության զարգացումը՝ հիմք ընդունելով համաշխարհային տնտեսական համակարգի մեջ ազգային տնտեսությունների ներգրավվածության մակարդակը, կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

1. 20-րդ դարի 20-30-ական թթ., որը բնութագրվում է համաշխարհային տնտեսության մեջ ճգնաժամային երևույթներով: Այս ժամանակաշրջանը նաև բնութագրվում է ոչ կայուն տնտեսական հարաբերություններով, քանի որ այն սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, որի արդյունքում ֆիզիկապես ոչնչացվել էր վիթխարի արտադրական և մարդկային ռեսուրսներ: Մյուս կողմից Տնտեսական մեծ ճգնաժամը բերեց արտահանման ծավալների զգալի կրճատման (միջազգային առևտրի կրճատում) և ուժեղացրեց ազգային արտադրության դերը: Այսպես, 1938թ. արտահանման բաժինը զարգացած երկրներում կազմում էր միջինում ՀՆԱ-ի 3.8%: Ազգային արտադրությանը պաշտպանելու համար երկրները կիրառում էին խիստ հովանավորչական քաղաքականություն:
2. Երկրորդ փուլը (1940-80-ական թթ.) բնութագրվում էր նրանով, որ II Համաշխարհային պատերազմից ավարտից հետո իր տնտեսական ներուժով ԱՄՆ գերազանցեց մյուս բոլոր երկրներին: Այս ժամանակաշրջանում գրեթե բոլոր կապիտալիստական երկրներից ակտիվորեն արտահանվում էր ձեռնարկատիրական կապիտալը: Արդյունքում միջազգային արտադրության ծավալների ավելացումը զգալի ազդեցություն ունեցավ համաշխարհային տնտեսության վրա: Արտադրական փոխհարաբերություններում գլխավոր ուժ հանդիսացան վերազգային կորպորացիաները, որոնք համարվում էին որպես աշխատանքի միջազգային բաժանման կրողներ: Վերազգային կորպորացիաները ձևավորեցին միջազգային արտադրական համակարգեր, որոնք ներառում էին արտադրանքի թողարկումը, իրացումը և վարկավորումը: 1960-ական թթ. կեսերին գաղութատիրական համակարգի վերացմամբ երևան եկան զարգացող երկրների խոշոր խումբ, որոնք միանգամից հատուկ տեղ զբաղեցրեցին համաշխարհային տնտեսության մեջ: Եվ վերջապես այս ժամանակաշրջանում առաջ եկան և բուռն կերպով սկսեցին զարգանալ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները:

3. 1990-ական թթ. մինչև օրս ընկած ժամանակաշրջանը կարելի է համարել որպես համաշխարհային տնտեսության զարգացման նոր ժամանակաշրջանի սկիզբ: Այս փուլը բնութագրվում է նրանով, որ ի տարբերություն նախորդ երկու փուլերի զգալի ուժեղացավ տնտեսական փոխազդեցությունը և փոխկապակցվածությունը: Փոխվեց Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային միության սոցիալ-տնտեսական կառուցվածքը (անցում դեպի շուկայական տնտեսություն): Զարգացած երկրները թևակոխեցին հետինդուստրիալ դարաշրջան: Մի շարք երկրներ իրենց տնտեսական զարգացման գործընթացում զգալի հաջողություններ գրանցեցին՝ Արևելյան Եվրոպայի ու Հարավ Արևելյան Ասիայի երկրներ, Չինաստան, Հնդկաստան և այլն: Ընդհանուր առմամբ այս ժամանակաշրջանը բնութագրվում է նրանով, որ լայնորեն ընթանում է ներքին և արտաքին տնտեսական կյանքի ազատականացում և գլոբալացում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ եթե 20-րդ դարի սկզբին համաշխարհային տնտեսության ամբողջությունը հիմնականում ապահովվում էր ոչ տնտեսական/քաղաքական ուժով, ապա ներկայիս համաշխարհային տնտեսական համակարգը հիմնականում կառուցված է տնտեսական ուժի հիմքերի վրա: Ներկայիս համաշխարհային տնտեսությունը բնորոշ է հետևյալ առանձնահատկությունները (Տես Նկար 1.2):

Նկար 1.2 Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս միտումները